

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2015 թվականի
հունվարի 23

ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
2014 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

- Համայնքի ղեկավարի իրավասությունների շրջանակում իրավիրվել է ավագանու 6 նիստ, ընդունվել է ավագանու 24 որոշումներ՝ կապված բյուջեի փոփոխության, հողի հարկի և գույքահարկի գանձումների բարելավման, Նորավանի միջնակարգ դպրոցի կառավարման խորհրդում համայնքից անձ ընդգրկելու, դաշտամիջյան և գերեզմանատուն տանող ճանապարհների բարելավման աշխատանքների, ամենամյա գույքագրման և հողային հաշվեկշռի հաստատման մասին:
- Ընդունվել է համայնքի ղեկավարի 10 որոշումներ և 11 կարգադրություններ:
- Աշխատակազմի քարտուղարի կողմից արձակվել է 9 հրաման:
- Մարզպետարանից և այլ կազմակերպությունների կողմից ստացվել է թվով 184 գրություններ:
- Գյուղապետարանի կողմից ելքագրվել է թվով 150 գրություններ:
- Համայնքի բնակիչներին հատկացվել է թվով 415 տարաբնույթ տեղեկանքներ:
- Նորավան համայնքի բնակիչների կողմից ստացվել է թվով 30 դիմումներ, և բոլորին տրվել է անհրաժեշտ լուծումներ:
- Կատարվում է քաղաքացիների ընդունելություն՝ օրենքով սահմանված կարգով:
- Տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերին համապատասխան 3 առևտրի օբյեկտներին հատկացվում է ծխախոտի և ոգելից խմիչքների վաճառքի թույլտվություն:
- 2014 ընթացքում հողի հարկի և գույքահարկի գանձումները կազմում են՝

	<u>պլան</u> հազ.դրամ	<u>կատարողական</u> հազ.դրամ	<u>%</u>
ա Հողի հարկ՝	4700.0	4916.1	104.6
բ Գույքահարկ՝	1480.0	1482.6	100
գ Հողի վարձավճար՝	376.0	376.7	100.2
դ Տեղական տուրքեր՝	160.0	145.0	90.6

2014 թվականի ընթացքում ստացվել է դոտացիա 15908.8 հազ.դրամ: Վճարվել է աշխատավարձ 13607,0 հազ.դրամ:

- Գրադարանի աշխատավարձը վճարվել է 806.0 հազ.դրամ:
- 2014 թվականի զարմանը դպրոցի, գյուղապետարանի շենքի և գերեզմանատան հարակից տարածքներում կատարվել է բարեկարգման աշխատանքներ:
- Համայնքային սեփականություն հանդիսացող 23.0 հա հողատարածքներ ավագանու որոշմամբ հատկացված է վարձակալության 5 տարի ժամկետով մրցութային կարգով:

- Սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումների շրջանակներում Նորավան գյուղական համայնքում կազմակերպվել է անասնաղբի և կենցաղային աղբի մաքրման աշխատանքներ և ստուգումներ:
- 2014 թվականի ընթացքում մեծ ուշադրություն և հսկողություն է սահմանվել շինարարական աշխատանքները օրինական կարգով կատարելու գործում:
- 2014 թվականի գարնանը կազմակերպվել և գյուղացիական տնտեսություններին է տրամադրվել անհրաժեշտ քանակությամբ պարարտանյութ և դիզելային վառելանյութ:
- Նորավան համայնքում ավագանու որոշմամբ աղբահանությունը կազմակերպվում է անհատ ձեռներեցի կողմից՝ շաբաթական մեկ օր, որի համար հատկացվել է 960.0 հազ. դրամ:
- Գրասենյակային, կապի, էլեկտրաէներգիայի և ջեռուցման ծախսերը 2014 թվականի ընթացքում կազմել են 1412.1 հազ.դրամ:
- 2014 թվականին Արմավիրի մարզի կարկտահարված գյուղերին որպես օգնություն հատկացվել է 150.0 հազ.դրամ:
- Նորավան համայնքում 2014 թվականի ցրտահարությունից տուժած թվով 44 գյուղացիական տնտեսություններին ՀՀ Կառավարության որոշմամբ փոխհատուցվել է հողի հարկը 274.3 հազ. դրամ գումարի չափով:
- Նորավանի գյուղապետարանում ձեռք է բերվել գույք /համակարգչային տեխնիկա / 262.0 հազ. դրամ արժողությամբ:
- 2014 թվականի ամռանը սակավաջրության պատճառած վնասները մեղմելու նպատակով կառուցվել է 750 մ երկարությամբ պոլիէթիլային խողովակներով ոռոգման ջրագիծ՝ 2771.0 հազ. դրամ արժողությամբ:
- 2014 թվականի ուսումնական տարվա սկզբին 1-ին դասարանցիներին հատկացվել է գրենական պիտույքներ և պայուսակներ:
- Ամանորի կապակցությամբ թվով 190 երեխաների հատկացվել է ամանորյա նվերներ՝ 500.0 հազ. դրամ արժողությամբ::
- 2014 թվականի ընթացքում Նորավան համայնքի թվով 21 սոցիալապես անապահով ընտանիքների հատկացվել է դրամական օգնություն 700.0 հազ դրամ գումարի չափով:
- Նախապատրաստական աշխատանքներ է իրականացվել Նորավանի կենտրոնական փողոցի լուսավորության համար:
- Նորավանի գյուղապետարանի կողմից վերահսկողություն է իրականացվում ընտանի կենդանիների ժամանակին բուժումներ կատարելու գործում:
Համայնքի անասնաբույժի կողմից ժամանակին իրականացվում է խոշոր եղջերավոր կենդանիների տուբերկուլյոզի ստուգումները, դաբաղի պատվաստումը, բրուցելյոզի ստուգումները, խոզերի, մանր եղջերավոր անասունների անհրաժեշտ բուժումները և ստուգումները:
Իրականացվում է նաև 285 մեղվաըտանիքների վարիտոզի մշակումը:

Նորավանի գյուղապետարանի աշխատակիցների աշխատանքները 2015 թվականի ընթացքում անհրաժեշտ է կենտրոնացնել հետևյալ կարևոր խնդիրների վրա.

- Ապահովել բյուջեով նախատեսված մուտքերի հավաքագրումն ըստ եռամսյակների:
- Ստեղծել համապատասխան պայմաններ գրադարանի գործունեության համար:
- ՀՀ Կադաստրի Արմավիրի տարածքային ծառայության հետ համատեղ իրականացնել քարտեզագրման ժամանակ թույլ տրված սխալների ճշգրտումներ:

- Միջոցներ և հնարավորություններ փնտրել Նորավան գյուղական համայնքում մանկապարտեզ կառուցելու համար:
- Ավարտին հասցնել գերեզմանատան հարակից տարածքի բարեկարգման աշխատանքները:
- Ավարտել կենտրոնական փողոցի լուսավորության աշխատանքները:
- Իրականացնել դաշտամիջյան և գերեզմանատուն տանող ճանապարհների բարեկարգում:

Նորավան գյուղական համայնքի բնակչության առջև ծառայած խնդիրներ կան, որոնց լուծման համար պահանջվում է մարզպետարանի միջնորդությունը՝ ֆինանսական միջոցներ ներդնելու համար:

- Գյուղամիջյան ճանապարհների և ոռոգման ցանցերի բարեկարգում:
- Մանկապարտեզի շենքի կառուցում:
- Մշակույթի տան կառուցում:
- Հեղեղատարի մաքրման աշխատանքների իրականացում:

ՆՈՐԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԵԿԱԿԱՆ



(Handwritten signature)

Ա. ՄԻՔԱԵԼՅԱՆ

2015 թվականի
հունվարի 23